ԵՐՎԱՆԴ ՍԱՐԳՍՅԱՆ
(Ծննդյան 100-ամյակի առթիվ)

Այս տարի լրանում է Հայաստանի թուրքագիտական դպրոցի հիմնադիրներից և կարկառուն ներկայացուցիչներից մեկի՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Երվանդ Ղազարի Սարգսյանի հարյուր տարին: Նրա գրչին

են պատկանում 12 մենագրություններ և 100-ից ավելի գիտական այլ աշխատություններ, որոնք, իրավամբ գիտական հեղինակություն են բերել հեղինակին և հայրենական թուրքագիտությանը: Վաստակաշատ գիտնականը խորհրդային շրջանի հայոց պատմագիտական մտքի լավագույն ներկայացուցիչներից էր, մի շարք փայլուն հետազոտությունների հեղինակ:

Պրոֆ. Սարգսյանի կենսագրությունը բնորոշ է իր սերնդի շատ գիտնականների համար: Ծնվել է 1913 թ. Սիսիանի շրջանի պատմական Բռնակոթ գյուղում, միջնակարգ կրթությունը ստացել է Բաքվում, իսկ բարձրագույնը՝ Լենինգրադի համալսարանում: 1942 թ. հաջողությամբ ավարտելով ԽՍՀՄ արևելագիտության ինստիտուտի ասպիրանտուրան՝ նա վերադառնում է Հայաստան ու աշխատանքի անցնում Արտաքին գործերի նախարարությունում՝ որպես Թուրքիայի գծով պատասխանատու աշխատակից: Այդ շրջանում նա գործուն մասնակցություն է ունենում Հայկական հարցի և Թուրքիայի հակահայկական հանցավոր քաղաքականությանը վերաբերող մի շարք կարևոր զեկուցագրերի պատրաստման աշխատանքներին: Այդ զեկուցագրերն ուղարկվում էին Մոսկվա և օգտագործվում Թուրքիայի նկատմամբ 1945 – 1946 թթ. ԽՍՀՄ քաղաքականությունը մշակելու նպատակով: Մասնավորապես, վերջերս հրատարակված դիվանագիտական փաստաթղթերի ժողովածուում զետեղված է Ե. Սարգսյանի կազմած հույժ գաղտնի տեղեկանքը Կարսի և Արդահանի շրջաններում թուրքական իշխանությունների կողմից 1918 թ. անցկացված «հանրաքվեի» արդյունքների և նպատակների վերաբերյալ, որտեղ համոզիչ ցույց են տրված կեղծիքներն ու խարդախությունները, որոնք իրականացրել են այդ «հանրաքվեի» կազմակերպիչները («Армения и советско-турецкие отношения в дипломатических документах 1945–1946 гг.», под ред. А. Киракосяна, Ереван, 2010, с. 95–99, *համահեղինակ՝ Զ. Չարչյան):*

Հետագայում Ե. Սարգսյանը սկսում է աշխատել Գիտությունների ակադեմիայի համակարգում: Երբ 1958 թ. հիմնադրվեց Արևելագիտության սեկտորը, հետագայում՝ ինստիտուտը, նա առաջիններից էր, ով դարձավ նրա աշխատակիցներից: Ե. Սարգսյանը երկար տարիներ ղեկավարել է

Արևելագիտության ինստիտուտի Թուրքիայի բաժինը, որը նրա ջանքերի շնորհիվ վերաճեց Թուրքիայի պատմության ուսումնասիրման և մասնագետների պատրաստման կարևոր կենտրոնի, որտեղ նրա անմիջական մասնակցությամբ ու ղեկավարությամբ ձևակերպվեցին հայ թուրքագիտական դպրոցին հատուկ շատ մոտեցումներ ու հիմնադրույթներ:

1946 և 1963 թթ. նա պաշտպանել է թեկնածուական ու դոկտորական ատենախոսություններ, որոնք կարևոր ներդրում էին Թուրքիայի և Արևմտյան Հայաստանի նոր շրջանի պատմության ուսումնասիրման բնագավառում: Դոկտորական ատենախոսության պաշտպանությունը Մոսկվայում վերաճել է սուր և սկզբունքային բանավեճի՝ խիստ քաղաքականացված խորհրդային թուրքագիտության մոսկովյան դպրոցի ներկայացուցիչների հետ ու լայն արձագանք է ստացել գիտական և հասարակական շրջանակներում: Այդպես էր ձեռք բերվում հայկական թուրքագիտության հեղինակությունը…

Պրոֆ. Սարգսյանի, թերևս, ամենահաջողված գիտական աշխատությունը «Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասում (1914–1918)» գիրքն է, որը, ըստ էության, վերևում հիշատակված նրա դոկտորական ատենախոսությունն է: Այդ ստվարածավալ կարևոր մենագրությունը 1962 թ. հրատարակվել է ռուսերեն, իսկ 1964 թ.՝ հայերեն: Այստեղ հեղինակը, լայնորեն օգտագործելով արխիվային ու վավերագրական այլ նյութեր, համոզիչ ցույց է տալիս Օսմանյան կայսրության և քեմալական Թուրքիայի ծավալապաշտական նկրտումները Անդրկովկասի, գլխավորապես Արևելյան Հայաստանի նկատմամբ, վեր է հանվում հայ ժողովրդի ֆիզիկական բնաջնջման երիտթուրքական քաղաքականության անմիջական կապը նրա պանթյուրքիստական զավթողական ծրագրերի հետ: Մենագրության կարևոր արդյունքներից է հեղինակի եզրահանգումն այն մասին, որ քեմալական Թուրքիան հանդես եկավ որպես Օսմանյան կայսրության հակահայկական քաղաքականության շարունակող: Գիրքը մեծ հետաքրքրությամբ ընդունվեց հայաստանյան հասարակության կողմից, նշանակալից դեր կատարեց «վաթսունականների սերնդի» միջավայրում Թուրքիայի պատկերի ստեղծման մեջ: Այն այսօր էլ պահպանում է իր գիտական նշանակությունը և քաղաքական այժմեականությունը՝ օգնելով երիտասարդ սերնդի հետազոտողներին ու դիվանագետներին ավելի խորը հասկանալու Անդրկովկասի նկատմամբ Թուրքիայի քաղաքականության ծավալապաշտական էությունը:

Ե. Սարգսյանի կարևոր մենագրություններից է նաև «Օսմանյան կայսրության քաղաքականությունը Արևմտյան Հայաստանում և մեծ տերությունները 19-րդ դարի վերջի քառորդում և 20-րդ դարի սկզբին» գիրքը, որը լույս է տեսել 1972 թ. ռուսերեն: Այն աչքի է ընկնում օգտագործված մեծաքանակ փաստացի նյութի վերլուծման և ընդհանրացման բարձր մակարդակով և հիմնարար ներդրում է Հայկական հարցի ուսումնասիրման բնագավառում:

Պրոֆ. Ե. Սարգսյանն առաջիններից Հայաստանում ձեռնամուխ եղավ թուրքական պատմագրության մեջ լայն տարածում ստացած Հայաստանի և հայ ժողովրդի պատմությունը խեղաթյուրող հայեցակարգերի քննական

ուսումնասիրմանը, դրանց հակագիտական բնույթի բացահայտմանը: Արամ Սաֆրաստյանի հետ նա 1960 թ. հրատարակեց «Պատմության հակագիտական լուսաբանման մի քանի փաստերի մասին» (Արևելագիտական ժողովածու I, Երևան, 1960, էջ 379–400) արժեքավոր հոդվածը, որով, ըստ էության, Խորհրդային Հայաստանում սկիզբ դրվեց մեր ժողովրդի պատմության համար մեծ կարևորություն ունեցող այդ ոլորտի մասնագիտական հետազոտմանը: Հետագայում Ե. Սարգսյանը Ռուբեն Սահակյանի հետ հեղինակեց «Հայ ժողովրդի նոր շրջանի պատմության նենգափոխումը թուրքական պատմագրության մեջ» գիրքը (1963 թ.): Այն գնահատանքի արժանացավ ոչ միայն Հայաստանում, այլ նաև Մոսկվայում: Հետազոտման նկատմամբ հետաքրքրությունն այնքան մեծ էր, որ այն նույնիսկ վերահրատարակվեց Թեհրանում, թարգմանվեց անգլերեն և լույս տեսավ ԱՄՆ-ում, ինչը խորհրդային շրջանում գոյություն ունեցած «երկաթյա վարագույրի» պայմաններում հազվադեպ էր պատահում խորհրդային Հայաստանի թուրքագետների ուսումնասիրությունների հետ:

Ե. Սարգսյանը 1950–80-ական թվականների Հայաստանի գիտական կյանքի գործուն մասնակիցներից էր, ոչ միայն պարբերաբար լույս էին տեսնում նրա գիտական աշխատությունները, այլև մամուլում հաճախակի հանդես էր գալիս որպես հրապարակախոս, անդրադառնալով հայ հասարակայնության հուզող «հավերժ» խնդիրների՝ Հայկական հարց և հայոց ցեղասպանություն, մասնագիտական լուսաբանմանը: Հետաքրքիր զեկուցումներով հաճախակի հանդես է եկել գիտաժողովներում, այդ թվում՝ միջազգային, ակտիվորեն մասնակցել է գիտական բանավեճերի ու քննարկումների, եղել է մի շարք կոլեկտիվ մենագրությունների ու հոդվածների ժողովածուների հեղինակակից և պատասխանատու խմբագիր, ղեկավարել ու ընդդիմախոսել է բազմաթիվ ատենախոսություններ՝ իր հարուստ գիտելիքները կիսելով տասնյակ աշակերտների և կրտսեր գործընկերների հետ: Երկար տարիներ դասավանդել է Երևանի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետում՝ ավանդելով Թուրքիայի պատմության նոր շրջան և հատուկ ուշադրություն հատկացնելով թուրքական իշխանությունների հայաջինջ քաղաքականության դրսևորումների համակողմանի քննարկմանը:

Պրոֆ. Ե. Սարգսյանը դեռևս խորհրդային տարիներին սկսեց ուսումնասիրել 1920 թ. թուրք-հայկական պատերազմի հետ առնչվող բազմաթիվ արտաքին հանգամանքների բարդ կծիկը: Նա առաջիններից էր, ով ձեռնամուխ եղավ այդ խնդիրների վերաբերյալ մոսկովյան ու երևանյան արխիվների գաղտնի ֆոնդերում պահվող հարուստ, սակայն և հաճախակի իրարամերժ բնույթի փաստավավերագրական նյութի քննական հետազոտմանը: Տարիների լարված աշխատանքի արդյունքները հնարավոր եղավ մենագրության տեսքով հրատարակել միայն անկախ Հայաստանում. 1995 թ. լույս տեսավ նրա վերջին խոշոր արժեքավոր աշխատությունը՝ «Դավադիր գործարք. Հայաստան, Ռուսաստան, Թուրքիա» խորագրով: Այն կարևոր ներդրում է 1920 թ. թուրք-հայկական պատերազմի դիվանագիտական պատմության ուսումնասիրության բնագավառում:

1990-ականների կեսերին Հայաստանում ստեղծված կենցաղային ծանր պայմանները Ե. Սարգսյանին ստիպեցին տեղափոխվել ԱՄՆ՝ երիտասարդ թուրքագետներին զրկելով հնարավորությունից հաղորդակցվելու նրա հետ, օգտվելու նրա խորհուրդներից ու հարուստ կենսափորձից: Սակայն օտարության մեջ էլ նա շարունակեց անխոնջ ծառայել գիտությանը. օվկիանոսի այն կողմից մեզ էին հասնում նրա հոդվածները Թուրքիայի հակահայկական քաղաքականության տարբեր դրսևորումների մասին, որոնք պարբերաբար լույս էին տեսնում սփյուռքահայ մամուլի էջերում: Վաստակաշատ գիտնականը կյանքից հեռացավ 2010 թ.:

Իմ հուշերը պրոֆեսոր Սարգսյանի մասին ունեն տասնամյակների պատմություն: Նրանք սկիզբ են առնում դեռևս իմ մանկական տարիներից, երբ հաճախ տեսնում էի նրան մեր տանը՝ պապիկիս՝ թուրքագետ Արամ Սաֆրաստյանի հետ հարցեր քննարկելիս: Հետագայում, որպես ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի թուրքագիտության բաժնի ուսանող, լսել եմ նրա դասախոսությունները Թուրքիայի պատմության նոր շրջանի մասին, աշխատել եմ նրա ղեկավարության ներքո Գիտությունների ակադեմիայի արևելագիտության ինստիտուտի Թուրքիայի բաժնում, իսկ երբ նա ընտրվեց Արևելագիտության ինստիտուտի ԽՄԿԿ սկզբնական կազմակերպության քարտուղար, առաջարկեց ինձ լինել իր տեղակալը. տարիքն առել էր, երիտասարդ օգնականի կարիք ուներ… Հետագայում այնպես ստացվեց, որ նրան փոխարինեցի և որպես Թուրքիայի նոր շրջանի պատմության դասախոս ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետում և ավելի ուշ, երբ կյանքից անժամանակ հեռացավ պրոֆ. Ռուբեն Սահակյանը՝ նաև որպես ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի Թուրքիայի բաժնի վարիչ: Ներկայումս թուրքագիտության պատմություն եմ դասավանդում ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետում և ուսանողների հետ վերլուծում ենք անվանի թուրքագետ Երվանդ Սարգսյանի աշխատությունները: Ապագա թուրքագետների ուշադրությունն առաջին հերթին հրավիրում եմ նրա «Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասում (1914–1918)» մենագրության վրա և ընդգծում եմ այն միտքը, որ այն դարձավ թուրքագիտության հայկական դպրոցի հիմնասյուներից մեկը: Իմ հիշողություններում նա հանդես է գալիս ոչ միայն որպես հմուտ և լավատեղյակ գիտնական, հայրենասեր մտավորական, այլ նաև որպես բարի, կարեկցող, միաժամանակ ուրախ ու կատակասեր անձնավորություն, ով օժտված էր մեծ լավատեսությամբ և իր շուրջը ստեղծում էր դրական դաշտ:

Պրոֆ. Երվանդ Սարգսյանի՝ սիրելի Երվանդ Ղազարիչի բազմաթիվ գործընկերներն ու աշակերտները, Հայաստանի թուրքագետները վառ կպահեն գիտության երախտավորի կերպարը:

ՌՈՒԲԵՆ ՍԱՖՐԱՍՏՅԱՆ